ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ

«____» _____ 2019 թ. N _____-Ա

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 494-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 26-ի «Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Ճարտար և Զարդանաշեն համայնքների անասնաբուծության կանոնակարգման և արոտների կառավարման ծրագիրը հաստատելու մասին» N 494-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 3-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) արոտների ջրարբիացում. Ճարտար համայնքում նախատեսվում է արոտավայրերի սահմաններում գտնվող տասներկու վայրերում կենդանիների ջուր խմելու համար նախատեսված տարբեր երկարությամբ նովերի տեղադրում ու վերանորոգում և այդ նովերում մշտական ջուր ապահովելու համար ջրագծի անցկացում, իսկ Զարդանաշեն համայնքում՝ համայնքային արոտավայրերի սահմաններում կամ արոտ տանող ճանապարհներին գտնվող հինգ վայրերում կենդանիների ջուր խմելու համար նովերի տեղադրում, հին նովերի վերանորոգում, ջրագծերի անցկացում և այլ աշխատանքների իրականացում: Պահանջվող աշխատանքների իրականացման համար նախատեսվում է ներդնել 18 285 400 (տասնութ միլիոն երկու հարյուր ութսունհինգ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումար.

4) միջդաշտային ճանապարհների փշալարապատում. պահանջվող աշխատանքների իրականացման համար նախատեսվում է ներդնել 9 408 600 (ինը միլիոն չորս հարյուր ութ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումար.».

2) NN 1 և 2 աղյուսակները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ***Բ. ՍԱՀԱԿՅԱՆ***

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Հ/Հ	ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ	ՂԵԿԱՎԱՐԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ	ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ԹՎԱԳՐՈՒՄԸ
1.	ԱՀ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ		
2.	ԱՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ	Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		
3.	ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ	Ա. ԼԱՉԱՐՅԱՆ		

Առաջարկությունները և առարկությունները՝ _____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Նախագիծը ներկայացնողը՝
ԱՀ գյուղատնտեսության նախարար *Ժ. Միրզոյան*

«____» _____ 2019 թ.

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2019 թվականի _____ ____-ի
N _____ - Ա որոշման

« Աղյուսակ N 1

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՃԱՐՏԱՐ ԵՎ ԶԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԱՐՈՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

/հազ. դրամ/

Հ/Հ	***Ներդրումների նպատակը***	***2019թ.***	***Այդ թվում՝ ըստ եռամսյակների***			
			1-ին	***2-րդ***	***3-րդ***	***4-րդ***
1.	Համայնքի հողաշինարարական հատակագծի ձեռքբերում	28.0	-	28.0	-	-
2.	Արոտների ջրարբիացում	18 285.4	-	10 494.9	-	7 790.5
3.	Արոտների ջրարբիացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	731.4	-	419.8	-	311.6
4.	Միջդաշտային ճանապարհների փշալարապատում	9 408.6	-	8 913.1	-	495.5
5.	Միջդաշտային ճանապարհների փշալարապատման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	376.3	-	356.5	-	19.8
6.	Մակերեսային բարելավում (1 հեկտարի հաշվով 38 000 ՀՀ դրամ)	4 750.0	-	190.0	2 470.0	2090.0
7.	Միջդաշտային ճանապարհների բարեկարգում (1500 մետր)	3 000.0	-	3 000.0	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ		***36 579.7***	-	***23 402.3***	***2 470.0***	***10 707.4***

Աղյուսակ N 2

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՃԱՐՏԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԱՐՈՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

/հազ. դրամ/

Հ/Հ	Ներդրումների նպատակը	2019թ.	Այդ թվում՝ ըստ եռամսյակների			
			1-ին	2-րդ	3-րդ	4-րդ
1	Համայնքի հողաշինարարական հատակագծի ձեռքբերում	**20.0**	-	20.0	-	-
2	Արոտների ջրարբիացում	**14 396.8**	-	7 707.0	-	6 689.8
3	Արոտների ջրարբիացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	**575.9**	-	308.3	-	267.6
4	Միջդաշտային ճանապարհների փշալարապատում	**9 408.6**	-	8 913.1	-	495.5
5	Միջդաշտային ճանապարհների փշալարապատման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	**376.3**	-	356.5	-	19.8
6	Մակերեսային բարելավում (1 հեկտարի հաշվով 38 000 ՀՀ դրամ)	**570.0**	-	-	570.0	-
7	Միջդաշտային ճանապարհների բարեկարգում (800 մետր)	**1 600.0**	-	1 600.0	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ		**26 947.6**	**-**	**18 904.9**	**570.0**	**7 472.7**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ԶԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԱՐՈՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

/հազ. դրամ/

Հ/Հ	Ներդրումների նպատակը	2019թ.	Այդ թվում՝ ըստ եռամսյակների			
			1-ին	2-րդ	3-րդ	4-րդ
1	Համայնքի հողաշինարարական հատակագծի ձեռքբերում	**8.0**	-	8.0	-	-
2	Արոտների ջրարբիացում	**3 888.6**	-	2 787.9	-	1 100.7
3	Արոտների ջրարբիացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	**155.5**	-	111.5	-	44.0
4	Մակերեսային բարելավում (1 հեկտարի հաշվով 38 000 ՀՀ դրամ)	**4 180.0**	-	190.0	1900.0	2090.0
5	Միջդաշտային ճանապարհների բարեկարգում (700 մետր)	**1 400.0**	-	1400.0	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ		**9 632.1**	**-**	**4 497.4**	**1 900.0**	**3 234.7**

»:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԼԱՉԱՐՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 494-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

<u>Անհրաժեշտությունը</u>

«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 26-ի N 494-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացումը պայմանավորված է ԱՀ Մարտունու շրջանի Ճարտար և Զարդանաշեն համայնքներում անասնաբուծության կանոնակարգման և արոտների կառավարման ծրագրով նախատեսված արոտների ջրարբիացման համար լրացուցիչ աշխատանքների իրականացման անհրաժեշտությամբ:

<u>Ընթացիկ իրավիճակը և խնդիրները</u>

Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 26-ի N 494-Ա որոշմամբ նախատեսվում էր ԱՀ Մարտունու շրջանի Ճարտար և Զարդանաշեն համայնքներում տասնյոթ վայրերում վերանորոգել կամ տեղադրել նովեր: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ նախատեսված նովերը չեն բավարարում արոտավայրերում գյուղատնտեսական կենդանիներին խմելու ջրով ապահովելու համար: Ուստի անհրաժեշտ է ավելացնել նովերի քանակը և չափերը:

<u>Ակնկալվող արդյունքը</u>

Նախագծի ընդունմամբ կստեղծվեն անհրաժեշտ պայմաններ ԱՀ Մարտունու շրջանի Մարտունու շրջանի Ճարտար և Զարդանաշեն համայնքներում գյուղատնտեսական կենդանիներին խմելու ջրով ապահովելու համար

<u>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք</u>

Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչության և իրավաբանական բաժնի կողմից:

<u>Այլ տեղեկություններ</u>

«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 26-ի N 494-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ***Ժ.ՄԻՐԶՈՅԱՆ***

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 494-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 26-ի N 494-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Արցախի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 494-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 26-ի N 494-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ***Ժ.ՄԻՐԶՈՅԱՆ***

ԻՐԱՎԱԿԱՆ-ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 494-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 26-ի N 494-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԵՎ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը՝

«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 26-ի N 494-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝

ԱՀ գյուղատնտեսության նախարարություն

ԱՀ կառավարության որոշումն ուղարկել՝

1. ԱՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԱՀ բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարություն
3. ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն
4. ԱՀ ֆինանսների նախարարություն
5. ԱՀ Մարտունու շրջանի վարչակազմ

Նախագիծը պատրաստողը՝

ԱՀ գյուղատնտեսության նախարարության անասնաբուծության և անասնաբուժության վարչություն:

_____ ***Ն. Մուսայելյան***
(ստորագրությունը)

«_____» _____ 2019 թ.